ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/106 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ	1. «Երևանի պատվավոր քաղաքացի» հուշամեդալ 1. Արտաքին տեսքի վերաբերյալ պահանջներ Հուշամեդալը բաղկացած է կախիչից և դրան ամրացած սկավառակից: Հուշամեդալն իրենից ներկայացնում է 98մմ երկարությամբ և 90մմ լայնությամբ ուղղանկյուն, այն պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Հուշամեդալի հաստությունը 6մմ է, քաշը՝ 165գր/+-2 գր./:Մեդալն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Հուշամեդալի դիմերեսին պատկերված է կենտրոնում Երևան քաղաքի զինանշանը պատկերող դրոշմաքանդակը, կլոր շրջանի մեջ արված գծանշումները խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները, այն էմալապատած

				է: Ձախ կողմում Երեբունի քաղաքի հիմնադրման սեպագիրը, աջ կողմում Երևանի քաղաքապետարանի շենքի կամարանիստ պատկերը: Մեդալի արտաքին շրջագծի կորին զուգահեռ, ուռուցիկ մեծատառերով գրված է ««ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ»» գրվածքը: Կախիչը իրենից ներկայացնում է կապույտ գույնի ժապավեն, որի լայնությունը 24մմ է իսկ երկարությունը 500մմ: Ժապավենի երկու եզրային մասերով պատկերած է ոսկեգույն զարդանախշ: Բոլոր չափսերի շեղումը թույլատրվում է մինչև 2%: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ և ունենա իսկության հավաստագիր: 2. Որակի և գունային երանգների վերաբերյալ պահանջներ Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի նմուշի արտաքին տեսքին, ունենա նույն ռելիեֆային պատկերներն ու գրվածքները: Չի թույլատրվում՝ - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: - Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի տարբերությունը պետք է լինի ոչ ավել քան 0.1մմ: 3. Պատրաստման տեսակի վերաբերյալ պահանջներ Մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունն ապահովելու համար դրանք պատրաստվում են միայն դրոշմման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: 4. Անվանադրոշմում, հարգադրոշմում Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը և արծաթի համապատասխան հարգը: 5. Համաձայնեցման ենթակա փաստաթղթեր

				Մատակարարի կողմից նմուշների 3Դ մոդելավորված մեդալների նկարները և հետո իրական նմուշները պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ: * Բոլոր չափաբաժինների մասով մոդելավորված մեդալների նկարները և գծագրային սխեման կցված է համակարգում /իրական շահառուների մասին հայտարարագրի հետ միասին/:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/106 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				